Funded by
the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Դեպի Կանաչ տնտեսություն «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի հետ Հայաստանում

«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրն իր զորակցությունն է հայտնում ուկրաինացի ժողովրդին

Հայաստանը զգալի ներդրումներ է կատարել արևային էներգետիկայի ոլորտում

2021-2022թթ. ձեռքբերումները

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

2019 թվականից ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրն աջակցում է Հայաստանին՝ ի թիվս Արևելյան գործընկերության այլ երկրների, կանաչ տնտեսության անցնելու ուղին ընտրելու գործում: Այն օգնում է պահպանել բնական կապիտալը և բարձրացնել մարդկանց էկոլոգիական բարեկեցությունը՝ բնապահպանական միջոցառումների աջակցության, «կանաչ աճի» հնարավորությունների ցուցադրման և ստեղծման, ինչպես նաև բնապահպանական ռիսկերի և ազդեցությունների առավել արդյունավետ կառավարման մեխանիզմների սահմանման միջոցով: Այդ նպատակով այն մեկ ռազմավարական շրջանակի մեջ է միավորում կանաչ տնտեսությանը նպաստող որոշումների կայացման խնդիրները, շրջանաձև տնտեսությունը, խելամիտ բնապահպանական կանոնակարգերը, էկոհամակարգերի պահպանության և գիտելիքների փոխանցման խնդիրները:

2021 թվականին Արևելյան գործընկերության երկրների շրջակա միջավայրի նախարարները ճանաչեցին «Եվրոպական կանաչ գործարքը» (EGD) որպես իրենց ազգային քաղաքականության մշակման ուղենիշ: Այդ ժամանակից ի վեր «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիր իր գործունեության մեջ ներառել է «Եվրոպական կանաչ գործարքի» դրույթները:

2022թ. սկզբին «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքը հայտնի դարձավ որպես «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի – Կանաչ տնտեսություն»: Այդ փոփոխությունը պայմանավորված էր «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի հովանու ներքո նոր ծրագրի գործարկմամբ, այն է՝ «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի – Ջրային ռեսուրսներ և տվյալներ»:

Այս գրքույկում նշվում են «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի – Կանաչ տնտեսություն» ծրագրի ձեռքբերումները 2021-2022թթ.՝ ցույց տալով Հայաստանում և տարածաշրջանային մակարդակով դրա շոշափելի արդյունքները:

Կանաչ տնտեսությանը նպաստող որոշումների ընդունում Հայաստանում

- Հայ պաշտոնյաների և հասարակության լայն շերտերի կարողությունների զարգացման նպատակով Հայաստանում մեկնարկել են կանաչ տնտեսության վերաբերյալ ներածական դասընթացը և կանաչ տնտեսության վերաբերյալ խորացված առցանց դասընթացը:
- Փորձնական Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման (ՇՄՌԳ) նախապատրաստական փուլը Հայաստանում մեկնարկել է Գեղարքունիքի մարզի միկրոտարածքային պլանի (2022-2023թթ) մշակմանը զուգահեռ՝ ՇՄՌԳ-ի միջազգային չափանիշներին համապատասխան քաղաքաշինության կոմիտեին և շրջակա միջավայրի նախարարությանը գործնական ուսուցում ապահովելու նպատակով:
- Դեպոզիտային (կանխավճարի) վերադարձման համակարգի (ԴՎՀ, DRS) մոդելների ուսումնասիրությունը նպաստեց Հայաստանում արտադրողի ընդլայնված պատասխանատվության (ԱԸՊ, EPR) սկզբունքների մշակմանը:
- Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ)/Եսպոյի կոնվենցիայի հայերեն լեզվով տեսանյութն օգնեց բարձրացնել ազգային շահագրգիռ կողմերի իրազեկությունը անդրսահմանային ՇՄԱԳ-ի և պետական սահմաններից դուրս մարդկանց և բնության համար նրա օգուտների մասին:

ՄԵՐ ՀԱՋՈՂՎԱԾ ՕՐԻՆԱԿՆԵՐԻՑ. ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2021թ. իրականացված փաթեթավորման թափոնների ԴՎՀ (DRS) տնտեսական վերլուծությունն ուղղակիորեն նպաստել է ԱԸՊ (EPR) սկզբունքների մշակմանն ու ներդրմանը: Սա Հայաստանում թափոնների կառավարման գերակայությունն է՝ համաձայն ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) և ԱԸՊ (EPR) սկզբունքների ներդրման՝ կառավարության 2024թ. գործողությունների ծրագրի: Այս աշխատանքի կարևորությունը հաստատվում է նաև թափոնների ոչ ռացիոնալ կառավարման պրակտիկայի, լեռնային զբոսաշրջային վայրերում պլաստիկ թափոններով աղտոտման, դրանց վերամշակման ցածր ցուցանիշների դեմ պայքարով, որոնք հանգեցնում են շրջակա միջավայրի և առողջության վրա բացասական ազդեցությունների:

Հայաստանում ԱԸՊ (EPR) համակարգի ամրապնդման իրավական հիմքի առկայության դեպքում ԴՎՀ (DRS)-ը կծառայի որպես կատարյալ գործիք, որը կօգնի կրճատել թափոնների քանակն ու բարձրացնել վերամշակման մակարդակը: Հաշվի առնելով այն, որ ԴՎՀ (DRS)-ը կարող է ենթադրել մեծ ներդրումներ, ապակու և պլաստիկ շշերի ԴՎՀ (DRS) մոդելների տնտեսական վերլուծությունը կարևոր էր երկրի համար լավագույն տարբերակները որոշելու համար:

Այն նաև ապահովել է ծախսերի և օգուտների գնահատումներ որոշում կայացնողների համար՝ փաթեթավորման ԱԸՊ (EPR) առավել լայն շրջանակներում ԴՎՀ (DRS)-ը լիովին ֆունկցիոնալ դարձնելուն ուղղված իրենց աշխատանքներում:

Շրջակա միջավայրի նախարարությունը զգալի ջանքեր է գործադրել այս մոտեցումը հնարավորինս ներառական դարձնելու համար՝ խորհրդակցություններին ներգրավելով քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպությունների:

Տնտեսական աճի տեմպերը որոշակիորեն տարբերվում են բնական պաշարների օգտագործման տեմպերից, սակայն ճնշումները պահպանվում են





Շրջանաձև տնտեսություն և աճի նոր հնարավորություններ Հայաստանում

- Մննդի (ներառյալ ձկնարտադրության) և խմիչքների, տեքստիլի, մետաղական ապրանքների և շինանյութերի, քիմիական նյութերի և պլաստմասսայի արտադրության ոլորտներում աշխատող **13 ընկերությունների** աշխատակիցներ անցել են հմտությունների զարգացման սեմինարներ, որոնք անցկացվել են Ռեսուրսների արդյունավետության և մաքուր արտադրության (ՌԱՄԱ) փորձագետների կողմից:
- ՌԱՄԱ-ի ազգային հարթակի հայեցակարգը սահմանեց երկրում ՌԱՄԱ-ի ինստիտուցիոնալացման առաջնային քայլերը:
- ՌԱՄԱ-ի հաջողված օրինակների բազան **Հայաստանում ընդլայնվում է**, քանի որ ավարտին են հասցվել հինգ նոր բիզնես նախագծեր:
- **Շրջանաձև տնտեսության** պրակտիկային նվիրված՝ 30-ից ավելի մասնակիցների մասնակցությամբ վերապատրաստման երկու դասընթացները հնարավորություն տվեցին ծանոթանալու «խելացի» նյութերի ընտրությանը: Դրանք ներառում էին ինտելեկտուալ հարցեր, արտադրանքի ծառայության ժամկետի երկարաձգում, մոդուլարություն, ինչպես նաև փակ ցիկլով վերամշակման հայեցակարգը և դրա կիրառումը Հայաստանի պայմաններում:
- ՌԱՄԱ-ի տեղեկատվական հանդիպումը ավելի քան 50 մասնակիցներին ցույց տվեց դրա առավելությունները:
- Երկրում **գենդերային խնդիրների վերլուծության զեկույցը**, որը հիմնված էր գենդերային խնդիրների ներառմանն ուղղված ուսումնական սեմինարի արդյունքների վրա, օգնեց հետագայում մշակել Հայաստանում էկոլոգիական ոլորտների համար գենդերային զգայունության մատրիցան:
- **Կայուն պետական գնումների (ԿՊԳ, SPP)** մասին տեսանյութի հայերեն տարբերակը օգնում է բացատել դրանց առավելությունները պետական և համայնքային պաշտոնյաներին, ձեռնարկություններին և քաղաքացիական հասարակությանը:

ՄԵՐ ՀԱՋՈՂՎԱԾ ՕՐԻՆԱԿՆԵՐԻՑ. ՌԱՄԱ-ի ներդրում Հայաստանում Ռոզֆուդ ՍՊԸ-ի կողմից (բիզնես նախագիծ)

«Ռոզֆուդը» փոքր ընկերություն է Լոռու մարզում, որը մշակում է բանջարեղեն և մրգեր՝ տարբեր պահածոների և բնական մթերքների արտադրության համար: Ձգտելով բարելավել իր էկոլոգիական ցուցանիշները և օպտիմալացնել իր ռեսուրսների օգտագործումը (նյութեր, ջուր, էներգիա)՝ ընկերությունը մասնակցեց Արևելյան գործընկերության ԿԱՆԱՉ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ծրագրի (2013-2017թթ.) շրջանակներում ՌԱՄԱ-ի ցուցադրական նախագծին:

2021թ. մոնիթորինգի իրականացումը ցույց տվեց, որ ընկերությունը զգալի օգուտներ է ստացել ՌԱՄԱ-ի միջոցառումների իրականացումից:

- Տարեկան խնայել է մոտ 13,800 եվրո
- 14.3%-ով պակաս էլեկտրաէներգիայի, 26%-ով պակաս բնական գազի և 29%-ով պակաս ջրի սպառում (մեկ կիլոգրամի հաշվարկով՝ բազային վիճակի համեմատ):
- CO_2 արտանետումների կրճատում 77 տոննա $CO_{2\ \text{համ}}$/տարի:

ՌԱՄԱ-ի կիրառումը շահավետ էր սառեցված մրգերի և բանջարեղենի մշակման, արտադրության օպտիմալացման, նոր սարքավորումների տեղադրման, էներգասպառման նվազեցման, ինչպես նաև վերականգնվող էներգիայի օգտագործման խթանման առումներով:

Խնայողությունների մասով ձեռքբերումները

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մոնիթորինգի ավարտին ընկերության աշխատակիցների կողմից կիրառվել էր ՌԱՄԱ-ի 13 միջոցառում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	Ներդրում *(եվրո)*	Խնայողություն *(եվրո/տարի)*	Հետգնում (տարի)
Էներգասպառման օպտիմալացում	86,150	11,915	
Ջրի և նյութերի օգտագործման օպտիմալացում	11,000	1,629	
Թափոնների նվազեցում	–	148	
Ընդամենը՝:	**97,150**	**13,792**	**7**

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ	Ջուր *(մ3/տարի)*	Նյութեր *(տ/տարի)*	Թափոններ *(տ/տարի)*	Էներգիա *(կՎտժ/տարի)*	CO_2 *(տ/տարի)*
Էներգասպառման օպտիմալացում	–	–	–	229,446	77.6
Ջրի և նյութերի օգտագործման օպտիմալացում	1,200	8	–	–	–
Թափոնների նվազեցում	–	–	1.35	–	–

Էկոլոգիական խաղի պայմաններ և Հայաստանում շրջակա միջավայր-տնտեսություն կապի առաջընթացի մոնիթորինգ

- Մինչև 2030 թվականը Հայաստանում կլիմայական գործողությունների համար Ներդրումային կարիքների գնահատումն օգնեց գնահատել կլիմայի նպատակային ցուցանիշներին հասնելու համար անհրաժեշտ գումարը:
- Հայաստանի **բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման ապահովման** համակարգի գնահատումը (անգլերեն և հայերեն լեզուներով) ուսումնասիրել է համակարգը, վեր հանել ուժեղ և թույլ կողմերը և առաջարկել բարելավումներ:
- Արևելյան գործընկերության երկրներում «Կանաչ պարտքային կապիտալի շուկաների և կանաչ պարտատոմսերի դերի» ուղղությամբ տարվող աշխատանքների շրջանակներում երկրի **կապիտալի շուկայի** վերլուծությունն օգնեց գնահատել կանաչ ներդրումների համար պարտքային կապիտալի ֆինանսավորումն իր վրա վերցնելու դրա պատրաստակամությունը:

ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ. Որքա՞ն արժե Հայաստանում կլիմայի թիրախային ցուցանիշներին հասնելը:

Մինչև 2030 թվականը և դրանից հետո Հայաստանում կլիմայական գործողությունների համար ներդրումային կարիքների գնահատումը ցույց է տալիս, որ երկիրը պետք է ներդնի առնվազն 4.7 մլն. եվրո (գրեթե 3 տրլն. դրամ) համախառն հիմնական կապիտալում՝ մինչև 2030 թվականը կլիմայական թիրախային ցուցանիշներին հասնելու համար: Այս թիվը հասնում է մինչև 6.9 մլրդ եվրո (ավելի քան 4 տրլն. դրամ)՝ ատոմային էներգետիկայի ոլորտում նախատեսված ներդրումների իրականացման դեպքում: Գնահատումն ընդգծում է անհրաժեշտ ֆինանսական միջոցները հայթայթելու և Հայաստանի նպատակներին հասնելու համար դրանց համապատասխանաբար բաշխման հրատապությունը: Գնահատման արդյունքները ցույց են տալիս նաև, որ մինչև 2030 թվականը և դրանից հետո Հայաստանը պետք է շարունակի մշակել ավելի կոնկրետ նպատակներ, քաղաքականություն և ծրագրեր:

Կառավարության նոր և գոյություն ունեցող ծրագրերի և ռազմավարությունների մշակման և լրամշակման շնորհիվ, այդ թվում՝ Հայաստանի էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարությունը, Հարմարվողականության ազգային ծրագիրը կամ Փարիզի համաձայնագրով ստանձնած պարտավորությունները, ֆինանսական կարիքները կարող են ավելի պարզ դառնալ 2021 թվականից հետո: Սա հնարավորություն կտա առավել հստակեցնել ներկայիս գնահատականը: Առնվազն մինչև 2030 թվականը ածխածնի արտանետումների կրճատման հստակ ուղիները, ներառյալ ոլորտային նպատակները և քաղաքականությունը, կօգնեն Հայաստանին կատարել Փարիզի համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունները և մինչև 2050 թվականը հասնել ածխածնի չեզոքության ապահովման:

Կյանքի որակի բարելավման հարցում առաջընթաց, բայց կարելի է ավելին անել

PM2.5 ազդեցության հետևանքով մահացության ցուցանիշը



Ավելի շատ տնտեսական հնարավորություններ կարող են բացվել

Ավելի շատ տնտեսական հնարավորություններ կարող են բացվել



Էկոհամակարգային ծառայություններ և կենսապահովման միջոցներ

- 2021 թվականին Համաշխարհային բանկը միացավ «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրին՝ մասնավորապես օգնելու պահպանել Հայաստանի կենսաբազմազանությունը և պաշտպանել Հայաստանի անտառները:
- 2022 թվականին «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի հիմնական առաջնահերթություններից են Էմերալդ ցանցի ստեղծման խթանումն ու ցանցի թեկնածու տարածքների կառավարումը, ներառյալ աջակցություն.
  - Կազմել Էմերալդ ցանցի ստեղծման խթանման գործողությունների ազգային ծրագիրը,
  - Մշակել Հայաստանում Էմերալդ ցանցի տարածքների կառավարման պլանների պատրաստման ուղեցույցեր,
  - Մշակել Հայաստանի Էմերալդ ցանցի տարածքների կառավարման պիլոտային ծրագրեր,
  - զարգացնել կարողություններ կառավարման պլանների իրականացման համար, ներառյալ Էմերալդ ցանցի տարածքների մշտադիտարկում:
- 2022 թվականին Ծրագրի ուշադրության կենտրոնում կլինեն նաև՝
  - Անտառների և այլ բնական ռեսուրսների կառավարման գործում համայնքներին աջակցելը՝ համայնքային էկոտուրիզմի և ոչ փայտանյութային անտառային արտադրանքի արտադրության պլանավորման միջոցով,
  - Անտառների հավաստագրման և անտառների կառավարման ուղեցույցերի մշակումը,
  - Էկոհամակարգային ծառայությունների գնահատման համար ուղեցույցերի մշակումը:

ԳԻՏԵՔ,...որ Հայաստանի կենսաբազմազանությունը ամենահարուստներից մեկն է մայրցամաքում: Հայաստանում Էմերալդ տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է երկրի տարածքի ավելի քան մեկ երրորդը, իր մասշտաբով ամենախոշորներից է բոլոր մասնակից երկրներում և գրեթե երեք անգամ մեծ է Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանի այդ տարածքներից: **Երկրում կան տարատեսակ կենսամիջավայրեր՝ նախալեռնային կիսաանապատներից մինչև բարձրալեռնային ալպիական մարգագետիններ: Այս կենսամիջավայրերում են ապրում տարբեր կաթնասուններ, թռչուններ, սողուններ, միջատներ և բույսեր, որոնք ապրել են տաք կիսաանապատներում, խոնավ անտառներում, աղի ճահիճներում կամ բարձրալեռնային ժայռերին և քարացրոններում:**

2022թ. հուլիսին ՀՀ կառավարությունը ԵՄ-ի, Համաշխարհային բանկի և ՄԱԶԾ-ի հետ համատեղ գործարկեց ԿԱՆԱՉ Հայաստան հարթակը **«Աճ և վերականգնում հանուն Հայաստանի հզորացման, արդիականացման և բարգավաճման»**

Տարածաշրջանային միջոցառումների կարևորագույն դրվագները

- **Կայուն պետական գնումների և էկոպիտակավորման** վերաբերյալ վեբինարներն ու սեմինարները բարձրացրել են էկոլոգիապես մաքուր արտադրանքի չափանիշների վերաբերյալ իրազեկվածությունը և գրեթե **540** գրանցված մասնակիցներին ներկայացրել հաջողված օրինակները:

- Արևելյան գործընկերության երկրներին ներկայացվեց ՓՄՁ-ներին ուղղված **I-GO** նոր **գործիքը՝** ավելի քան 70 պրակտիկ մասնագետների միջև գիտելիքների փոխանակումը խթանելու և Արևելյան գործընկերության և Կենտրոնական Ասիայի երկրներում ՌԱՄԱ-ի կիրառմանն աջակցելու նպատակով:

- ԱԼԳ երկրներում փոքր և միջին ձեռնարկությունների՝ կանաչ տնտեսության անցման վերաբերյալ տարածաշրջանային խորհրդակցությունը ներգրավել էր ավելի քան 150 մասնակիցների՝ բացահայտելով **բիզնեսի մրցունակության** բարձրացման հնարավորությունները: Միջոցառմանը ներկայացվեցին ՌԱՄԱ-ի և Շրջակա միջավայրի բարելավման ծրագրերի մշակումները, ինչպես նաև Արևելյան գործընկերության երկրներում արդյունաբերական թափոնների քարտեզագրման մեթոդաբանության կիրառումը:

- «ԵՄ-ի Կանաչ շաբաթ»-ի կապակցությամբ թողարկվել է գրքույկ՝**«Կանաչ» արտադրանքի ԵՄ միասնական շուկան** և նրա Արտադրանքի էկոլոգիական ազդեցությունների գործիքը ԱԼԳ երկրների արդյունաբերական ձեռնարկություններին և փորձագետներին ներկայացնելու նպատակով:

- Մեկնարկել է ընտրված պատմությունների ամենամյա շարք՝ ներկայացնելու #Կանաչ արդյունաբերության անցման արշավի շրջանակներում ԱԼԳ տարածաշրջանում ՌԱՄԱ գնահատում **անցնող** տեղական արտադրական ձեռնարկությունները:

- Տարածաշրջանային վերլուծական ուսումնասիրության ընթացքում գնահատվեցին Արևելյան գործընկերության երկրներում փաթեթավորման թափոնների վերաբերյալ ԱԸՊ սխեմաների **կարգավիճակը՝** ներկայացնելով ԵՄ անդամ պետությունների լավագույն փորձի օրինակներ:

- **ԱԸՊ** մասով կարողությունների զարգացման վերաբերյալ տարածաշրջանային երեք վեբինարների ընթացքում ԱԼԳ երկրների **180** ներկայացուցիչներ (որոնց գրեթե կեսը կանայք էին) փոխանակվեցին իրենց փորձով և ԵՄ երկրների օրինակներից դասեր քաղեցին:

- **ԿՊԳ հայեցակարգի** մասին տեսանյութի **անգլերեն տարբերակը** պատրաստվել և գովազդվում էր «ԵՄ-ի Կանաչ շաբաթ»-ի ընթացքում:

- **Բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման ապահովմանն** ուղղված տարածաշրջանային երկրորդ խորհրդակցության ընթացքում, որին մասնակցում էր ՏՀԶԿ-ի և ԱԼԳ երկրների **77 ներկայացուցիչ**, քննարկվել են բնապահպանական խնդիրների ներառման քաղաքականություններն ու պահանջների կատարման ապահովման գործիքները, ինչպես նաև չկատարման համար տույժերի օպտիմալ համադրությունը:

- **Տեղեկատվական համակարգերի** վերաբերյալ կարողությունների զարգացման սեմինարի ընթացքում, որը կազմակերպվել էր Շոտլանդիայի շրջակա միջավայրի

Միջնաժամկետ ձեռքբերումներով ծրագիրը տես մեր գրքույկում:

պաշտպանության գործակալության հետ համատեղ ավելի քան **50 մասնակիցների** համար, ներկայացվեցին մի շարք տեղեկատվական համակարգեր, որոնք կիրառվում են Եվրոպայի թույլտվություն տրամադրող և տեսչական մարմինների կողմից: Այն ներառում էր առկա ցածր տեխնոլոգիական լուծումները, ավելի առաջադեմ համակարգերն ու նման համակարգերի զարգացման հնարավոր դժվարությունները:

- Արևելյան գործընկերության և ՏՀԶԿ երկրների **55 մասնակիցների** հետ **համատեղ բնապահպանական ստուգումների վերաբերյալ կարողությունների զարգացման** երկրորդ սեմինարը ներառում էր գործնական պարապունք, որտեղ մասնակիցները մտածեցին թափոնների փոխադրման համատեղ ստուգման պլան:

- ԱլԳ երկրների տնտեսական քաղաքականություն մշակող մարմինների ներկայացուցիչները վերապատրաստման դասընթացների և միջոցառումների միջոցով ստացել են գիտելիքներ **համապատասխանության միջազգային ցանցից**: Դրանք կազմակերպվել էին Բնապահպանական իրավունքի իրականացման և կիրարկման ԵՄ ցանցի (IMPEL) և ԵՄ-ի շրջակա միջավայրի դատավորների ֆորումի կողմից և ներառում էին սեմինարներ հետևյալ թեմաներով՝ «Էկոլոգիական վնասի գնահատման չափանիշները», «Թափոնների դեմ պայքարի պլանավորման և տեսչական ստուգումների գործնական հեռանկարները՝ շեշտը դնելով թափոններին առնչվող հանցագործությունների դատական փորձաքննությանն ու վնասների վերլուծության վրա» և «Մթնոլորտային արտանետումների ինքնավերահսկման ստուգման և հաղորդման ռազմավարությունները»:

- Պետական պաշտոնյաների համար կազմակերպված չորս վեբինարները **կանաչ պետական ծախսերի** վերաբերյալ նպաստեցին ԱլԳ երկրներում կանաչ պետական ներդրումային ծրագրերի նախագծմանն ու իրականացմանը: Վեբինարները փոխանցեցին ԵՄ երկրներում նմանատիպ ծախսային ծրագրերի կառավարման փորձը: Դրանց թվում էին բնապահպանական հիմնադրամների օգտագործումը Չեխիայի Հանրապետությունում և Լեհաստանում, ինչպես նաև այլընտրանքային սխեմաների կիրառումը Ավստրիայում, Շվեյցարիայում և Նիդերլանդներում: Դանիայից, Իտալիայից և կենսաէներգետիկայի ոլորտի միջազգային փորձագետները ներկայացրեցին կենսաքայքայվող մնացորդները էներգետիկ նպատակներով օգտագործելու ձևերը: Ավստրիայից, Ռումինիայից և Սլովակիայից մասնագետները փոխանցեցին իրենց երկրների գյուղական և հեռավոր շրջաններում ջրամատակարարման և կեղտաջրերի մաքրման բարելավման լավագույն փորձը:

- ***ԵՄ-ի Արևելյան գործընկեր երկրներում հանածո վառելիքի սուբսիդավորման*** մասին զեկույցը հրապարակվել է անգլերեն և ռուսերեն լեզուներով: Այդ վերլուծությունների արդյունքներն այժմ հասանելի են հանածո վառելիքի արտադրության և սպառման համար պետական աջակցության վերաբերյալ ՏՀԶԿ-ի տվյալների բազայում: Զեկույցը համալրվել էր հանածո վառելիքի մասին **տվյալների և տեղեկատվության հավաքագրման** լրացուցիչ փուլով, որտեղ շեշտը դրվում էր 2020 թվականին ԱլԳ կառավարությունների կողմից իրականացված հանածո վառելիքի սուբսիդավորման միջոցառումների վրա:

- Հրապարակվել են ԱլԳ տարածաշրջանում **հանածո վառելիքի** 2016-2020թթ. **սուբսիդավորման քաղաքականության հիմնական դրույթները՝** շեշտը դնելով 2020 թվականին իրականացված սուբսիդավորման վրա:

- **Կանաչ պարտատոմսերի** վերաբերյալ հատուկ նիստեր են կազմակերպվել ՏՀԶԿ-ի ԿԱՆԱՉ գործողությունների աշխատանքային խմբի 2021 թվականի ամենամյա խորհրդակցության և Արևելյան Եվրոպայում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում Կայուն ֆինանսական ֆորումի ընթացքում: Միջոցառումների մասնակիցները կիսվեցին կանաչ պարտատոմսերի թողարկման և օգտագործման փորձով և ներկայացրեցին գործնական առաջարկներ այս շուկայի նորեկներին: Նրանք քննարկեցին նաև **պարտքային կապիտալի շուկաների** հնարավոր դերը տարածաշրջանում երկարաժամկետ կանաչ ենթակառուցվածքներում ներդրումների ֆինանսավորման գործում:

- «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրը մասնակցել է 2022 թվականին Երկրի օրվան նվիրված «Ներդրումներ կատարենք մեր մոլորակում» **տեղեկատվա-քարոզչական արշավին:** Այն ներառում էր հետևյալ հոդվածները՝ Արդյունաբերական ոլորտի էկոլոգիզացում» և «Ինչպե՞ս կարող է հանածո վառելիքի սուբսիդավորմանը հետևելը օգնել ապահովել ավելի շատ ռեսուրսներ կանաչ էներգիայի անցման համար:

- Տարածաշրջանային ամենամյա երրորդ վեհաժողովում գնահատվել է «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի առաջընթացը ԱլԳ կանաչ տնտեսության անցման հարցում: Վեհաժողովին մասնակցում էր **110 մարդ**, այդ թվում՝ բարձրաստիճան մասնակիցներ՝ պետական քարտուղարի և նախարարների տեղակալների մակարդակով Արևելյան գործընկերության երկրներից:

- Տարբեր թեմաներով ազգային և լայնամասշտաբ տեղեկատվա-քարոզչական արշավները տարածաշրջանում, ինչպիսիք են շրջակա միջավայրի զրոյական աղտոտումը, թափոնների կառավարումը, կանաչ տնտեսությունը և ԵՄ-ի «Կանաչ գործարքի խթանումը» հասանելի են դարձել **ավելի քան 250 000 մարդու**:

- «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի կայքի միջոցով այն հասանելի է դարձվել 360 000 մարդու, մինչդեռ սոցիալական ցանցերի միջոցով՝ **500 000** մարդու:

- «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի տեղեկագրերն ուղարկվել են ավելի քան **600 հասցեատերերի**:

Կարճ՝ ԱԼԳ երկրների արձանագրած առաջընթացը «դեպի կանաչ տնտեսություն» նպատակի հարցում
Հայաստանում և Մոլդովայում մշակվում են Կանաչ տնտեսության գործողությունների ծրագրերը, հայեցակարգերն ու ռազմավարությունները
Վրաստանում և Մոլդովայում մշակվել են թափոնների կառավարման պլաններ
Մոլդովայում որպես առանձին մարմին ստեղծվել է Շրջակա միջավայրի նախարարությունը
2021թ. ՇՄՈԳ գծով վերապատրաստվել է 195 փորձագետ
Վրաստանում ընդունվել է Անտառային նոր օրենսգիրքը
Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում փոփոխվել է Շրջակա միջավայրի պահպանության մասին օրենքը
Կանաչ տնտեսության ներածական դասընթացը հասանելի է 5 պետական լեզուներով
Կանաչ տնտեսության թեմայով վերապատրաստվել է մոտ 50 փորձագետ
Վրաստանում ընդունվել է բնապահպանական պատասխանատվության մասին օրենքը
Վրաստանում և Մոլդովայում ընդունվել է կայուն պետական գնումների մասին օրենսդրությունը
2019թ. ի վեր Ծրագիրը հասանելի է եղել 1 500 000 մարդու
2019թ. ծրագրի մեկնարկից ի վեր ստեղծվել է 10 ՌԱՄԱ ակումբ
2021թ. ՌԱՄԱ գծով վերապատրաստվել է մոտ 270 փորձագետ
ՌԱՄԱ մեթոդաբանության կիրառումից օգտվել է ավելի քան 100 ՓՄՁ
Շուրջ 45 փորձագետներ տեղեկատվական համակարգերի վերաբերյալ պատրաստություն են անցել՝ բնապահպանական պահանջների կատարման ապահովումն ամրապնդելու համար
Կանաչ տնտեսության անցման նպատակով պետական ներդրումների ծրագրերով Ադրբեջանում, Վրաստանում և Մոլդովայում վերապատրաստվել է 75 քաղաքացիական և փորձագետ
Ադրբեջանում և Մոլդովայում նախապատրաստվել են ՇՄԱԳ և ՇՄՈԳ օրենսդրության փոփոխություններ
Նախապատրաստման փուլում է գտնվում Ուկրաինայի և Ռումինիայի անդրսահմանային ՇՄԱԳ-ի մասին երկկողմ համաձայնագրի նախագիծը

Նոր ծրագիր **«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի»** ծրագրի ընտանիքում, որը մեկնարկել է 2022 թվականին

Ջրային ռեսուրսների կառավարում և բնապահպանական տվյալներ

2022թ. Արևելյան գործընկերության երկրներում «Ջրային ռեսուրսների կառավարում և բնապահպանական տվյալներ» նոր ծրագրի («ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի. Ջուր և տվյալներ») մեկնարկն ամրապնդեց «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» նախաձեռնությունը:

Նոր ծրագիրը կնպաստի ջրային ռեսուրսների կայուն կառավարման բարելավմանը՝ շեշտը դնելով գետավազանային կառավարման պլանների ամրապնդման, ջրի բաշխման, շահագրգիռ կողմերի ներգրավվածության բարձրացման, ջրի մոնիթորինգի նոր մոտեցումների խթանման, ներառյալ COVID-19-ի պայմաններում, ջրային ռեսուրսների և առողջության խնդիրների օրակարգերի կատարելագործման, անդրսահմանային համագործակցության, ջրային ռեսուրսների վերաբերյալ ռազմավարությունների և քաղաքականության տնտեսական հիմնավորման բարձրացման և առաջնահերթ միջոցառումների կազմակերպման ֆինանսավորման հարցում աջակցության վրա: Ազգային մակարդակում առաջընթացը կապահովվի ԱԼԳ յուրաքանչյուր երկրում պետական քաղաքականությունների վերաբերյալ բազմաշահառու երկկխոսությունների միջոցով:

Նոր ծրագիրը կնպաստի նաև թափոնների, հողօգտագործման, գյուղատնտեսության, օդի և ջրի որակի վերաբերյալ բնապահպանական տեղեկատվության ամրապնդմանը և որոշում կայացնողների և քաղաքացիների համար այդ տվյալների հասանելիության բարելավմանը:

Նշված միջոցառումները հիմնվում և ապահովում են Բնապահպանական տեղեկատվության ընդհանուր համակարգի II փուլի և Արևելյան գործընկերության ծրագրերի համար «ԵՄ ջրային նախաձեռնություն + (EUWI+)»-ի վրա: Այս երկու ծրագրերը կարևոր դեր են խաղացել բնապահպանական մոնիթորինգի և տվյալների վերլուծության համակարգերի արդիականացման, ապացույցերի վրա հիմնված քաղաքականության մշակման և գործընկեր երկրների՝ ԵՄ և միջազգային իրավունքի նորմերին, մասնավորապես՝ ջրային ռեսուրսների շրջանակային դիրեկտիվին համապատասխանության բարձրացման գործում:

«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի. Ջուր և տվյալներ» ծրագիրն իրականացնող գործընկերներն են Ավստրիայի զարգացման գործակալությունը (ADA), Շրջակա միջավայրի պահպանության ավստրիական գործակալությունը (UBA), Ջրային ռեսուրսների միջազգային բյուրոն (OiEau) (Ֆրանսիա), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) և ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովը (ՄԱԿ ԵՏՀ):

Հակիրճ «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի. Ջուր և տվյալներ» ծրագրի մասին

Նպատակը՝ մարդկանց բարեկեցության բարելավում և կանաչ տնտեսության անցման հնարավորության ապահովում՝ համաձայն ԵՄ-ի Կանաչ գործարքի և ԿԶՆ-ների:

Հիմնական երկու բաղադրիչները՝

- **Ջրային ռեսուրսներ՝** Աջակցություն քաղցրահամ ջրային ռեսուրսների առավել ռացիոնալ օգտագործմանը
- **Բնապահպանական տվյալներ՝** Շրջակա միջավայրի վերաբերյալ հիմնավոր վիճակագրության ընդլայնում և բարելավում

Երկրներ՝ Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա

Տևողությունը՝ 2021-24թթ.

Բյուջեն՝ 12.75 մլն. եվրո (ԵՄ մասնակցություն՝ 12 մլն. եվրո)

Գործընկերներ՝ ADA, UBA, OiEau, OECD, UNECE

Տարածաշրջանային մակարդակով մեկնարկման միջոցառում՝ 9 փետրվարի 2022թ.

EU4Environment

Green Economy in Eastern Partner Countries

Funded by the European Union

«Կանաչ տնտեսությունը Արևելյան գործընկերության երկրներում» նախաձեռնության մասին

- **Բյուջեն՝** մոտ 20 մլն. Եվրո (որից ԵՄ մասնակցությունը՝ 19.5 մլն. եվրո)
- **Տևողությունը**: 2019-24
- **Իրականացնող կառույցներ՝** Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ), ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով (UNECE) ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր (UNEP), ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն (UNIDO) և Համաշխարհային բանկ (ՀԲ)
- **Ընդհանուր ղեկավարությամբ՝** Եվրոպական Հանձնաժողով
- **Հիմնական ազգային գործընկերներ՝** Շրջակա միջավայրի և Էկոնոմիկայի նախարարություններ

Հետևեք մեզ՝

www.eu4environment.org/

www.facebook.com/EU4Environment-100539842031096

www.youtube.com/channel/UCi1GrwqTT-WJ30ztZMPq3xw

www.flickr.com/photos/182351066@N07

http://eepurl.com/gUNbg1

Կապ մեզ հետ՝

eu4environment@oecd.org

Վերապահում. Երկրի մասին տեղեկություններ ներկայացնող սույն փաստաթուղթը կազմվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Այստեղ արտահայտված տեսակետները չեն արտացոլում Եվրոպական միության, նրա անդամների կամ Արևելյան գործընկերության երկրների կառավարությունների պաշտոնական կարծիքը: Այս փաստաթուղթը և դրա բովանդակությունը չեն վնասում որևէ տարածքի կարգավիճակին կամ ինքնիշխանությանը, միջազգային սահմանների սահմանազատմանը և որևէ տարածքի, քաղաքի կամ շրջանի անվանմանը:

Աղբյուրներ՝ OECD.stat. Սույն փաստաթուղթը պատրաստվել է «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի. Կանաչ տնտեսություն» և «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի. Ջուր և տվյալներ» ծրագրերը իրականացնող գործընկերների արժեքավոր ներդրմամբ: Հատուկ երախտագիտություն ենք հայտնում «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի ազգային համակարգող Տիգրան Սեկոյանին տեղեկատվության հավաքագրման և ստուգման նպատակով իր օժանդակության համար: Փաստաթուղթը խմբագրել է Մարկ Ֆոսը:

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP